ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

24.12.2020թ. № ԱԻՊ/06.3/28691-2020

Ձեր N _____

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ ԱՏՈՄ ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆԻՆ

Հարգելի պարոն նախարար,

Հայտնում եմ, որ Առողջապահության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «ԷՄ ԴԻ ԷՅ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2020 թվականի հոկտեմբերի 27-ին կնքվել է թիվ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2020/29-2» պայմանագիրը, որի համաձայն Վաճառողը պարտավոր էր մինչև 2020 թվականի նոյեմբերի 16-ը մատակարարել 50 հատ «Բերակտանտ» անվանմամբ դեղը, ընդհանուր 8,572,000 (ութ միլիոն հինգ հարյուր յոթանասուներկու հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով:

2020 թվականի դեկտեմբերի 24-ի դրությամբ Վաճառողը չի մատակարարել վերոգրյալ պայմանագրով նախատեսված ապրանքը: Ղեկավարվելով պայմանագրի 2.1.7 կետով և 2.1.7.1 կետի բ) ենթակետով Գնորդը միակողմանիորեն լուծել է վերոնշյալ պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր միջնորդությունը՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված միջոցառումները իրականացնելու հարցում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Կատարող Հասմիկ Սարգսյան
ԱՆ ֆինանսատնտեսագիտական վարչություն
Հեռ.՝ (060) 80-80-03/1804